ԿՈՌՈՒՊՑԻԱՅԻ ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

ՎԻՎ/57/2026

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՎԱՐՉԱԿԱՆ ՏՈՒՅԺ ԿԻՐԱՌԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ք. Երևան **18 մայիսի 2026թ.**

Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովը, կազմով՝ Մարիամ Գալստյանի (նիստը նախագահող), Արամայիս Փաշինյանի, Արմեն Մարուխյանի և Եփրեմ Կարապետյանի (այսուհետ՝ Հանձնաժողով), 2026 թվականի մայիսի 18-ին քննության առնելով «Սահմանադրական իրավունք միություն» կուսակցության (այսուհետ՝ Կուսակցություն) նախագահ Հայկ Բորիսի Բաբուխանյանի կողմից Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի (այսուհետ՝ Օրենսգիրք) 189.16-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված վարչական իրավախախտման վերաբերյալ ՎԻՎ/57/2026 գործը՝

Պ Ա Ր Զ Ե Ց

I. Վարչական իրավախախտումների վերաբերյալ գործի վարույթի նախապատմությունը

1.1 Հանձնաժողովը, «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» օրենքի (այսուհետ՝ Օրենք) 24-րդ հոդվածի 1-ին մասի 27-րդ և 28-րդ կետերով սահմանված Հանձնաժողովի լիազորության շրջանակներում, «Կուսակցությունների մասին» սահմանադրական օրենքի (այսուհետ՝ Սահմանադրական օրենք) 30-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն իրականացրել է Կուսակցության ֆինանսական միջոցների աղբյուրների և ծախսերի, ինչպես նաև գույքի մասին 2023 և 2024 թվականների հաշվետվությունների ստուգում, որի արդյունքում, ի թիվս այլնի, պարզվել է հետևյալը.

1.1.1 Կուսակցության 2023 թվականի տարեկան հաշվետվության՝ «Ծանոթություն 1» թերթի «1.1 Ֆիզիկական անձանց դրամական նվիրատվություններ» աղյուսակում առկա տվյալների և Կուսակցության բանկային հաշվի քաղվածքների համաձայն՝ Կուսակցությունը 2023 թվականին «Իրավունք մեդիա» ՍՊԸ-ից ստացել է ընդհանուր 410,000 ՀՀ դրամի չափով նվիրատվություն։

Կուսակցության 2024 թվականի տարեկան հաշվետվության՝ «Ծանոթություն 1» թերթի «1.1 Ֆիզիկական անձանց դրամական նվիրատվություններ» աղյուսակում առկա տվյալների համաձայն՝ Կուսակցությունը 2024 թվականի ընթացքում «Իրավունք մեդիա» ՍՊԸ-ից ստացել է ընդհանուր 100,000 ՀՀ դրամ, իսկ «Բիզնես Զեթ-Փիար» գովազդային հրատարակչություն ՍՊԸ-ից՝ ընդհանուր 300,000 ՀՀ դրամ նվիրատվություն։

1.1.2 Կուսակցության՝ 2023 թվականի տարեկան հաշվետվության «Այլ մուտքեր» տողում 243,500 ՀՀ դրամի փոխարեն պետք է արտացոլվեր 250,100 ՀՀ դրամը, որը հանդիսանում է 243,500 ՀՀ դրամ չպարզաբանված մուտքի և բանկային հաշվի քաղվածքով դուրս բերված ծախսերի հանրագումարը։

1.2 2025 թվականի սեպտեմբերի 30-ին թիվ 01/3682-2026 գրությամբ Հանձնաժողովը Հայկ Բաբուխանյանին հայտնել է Տարեկան հաշվետվությունների ստուգման արդյունքում հայտնաբերված վերը նշված անհամապատասխանությունների մասին և պահանջել է դրանց վերաբերյալ ներկայացնել պարզաբանումներ և հիմնավորող փաստաթղթեր։

1.3 2025 թվականի հոկտեմբերի 21-ի թիվ Մ-6419-2025 գրությամբ Կուսակցության կողմից ներկայացվել է պարզաբանում, որի համաձայն՝ «Իրավունք մեդիա» ՍՊԸ-ից ստացված 410,000 ՀՀ դրամի չափով նվիրատվություններից 60,000 ՀՀ դրամը տրված է որպես փոխառություն, իսկ մնացած գումարների փոխանցման ընթացքում նպատակ դաշտում «փոխառության» փոխարեն սխալմամբ նշվել է «նվիրատվություն», քանի որ մեխանիկորեն վերցված են եղել մինչև 2020 թվականն առկա ձևաթղթերից։ Կից ներկայացվել են քաղվածքներ պայմանագրերից մինչև չորս տարի ժամկետով փոխառությունների վերաբերյալ։ Կուսակցությունը հայտնել է, որ ֆինանսական վիճակը բարելավելու ընթացքում վերոհիշյալ գումարները կփոխանցվեն փոխառություն կատարող իրավաբանական անձանց։

«Իրավունք մեդիա» ՍՊԸ-ից և «Բիզնես Զեթ-Փիար» գովազդային հրատարակչություն ՍՊԸ-ից ստացած գումարների առնչությամբ Կուսակցության պարզաբանման համաձայն՝ դրանք փոխանցվել են որպես «բարեգործություն», այլ ոչ թե նվիրատվություն, բացառապես

Կուսակցության էլեկտրաէներգիայի, հեռախոսակապի և գույքահարկի վճարներն ապահովելու համար, որը երևում է հաշվարկային հաշվում:

Իսկ 243,500 ՀՀ դրամ չպարզաբանված մուտքի վերաբերյալ Կուսակցությունը հայտնել է, որ նշված գումարը հանդիսացել է նվիրատվություն անհատի կողմից:

1.4 Հանձնաժողովի 2025 թվականի նոյեմբերի 18-ի թիվ 01/4464-2025 գրությամբ Կուսակցությանը տրամադրվել է տասնօրյա ժամկետ՝ 243,500 ՀՀ դրամ նվիրատվություն կատարած անձի վերաբերյալ տեղեկություններ ներկայացնելու համար:

1.5 2025 թվականի նոյեմբերի 28-ի թիվ Մ-7196-2025 գրությամբ Հանձնաժողով է մուտքագրվել Կուսակցության պարզաբանումը, որի համաձայն՝ Կուսակցության 243,500 ՀՀ դրամն անհատի կողմից կատարված նվիրատվություն է, որը Կուսակցության տարեկան հաշվետվության մեջ որպես նվիրատվություն չարտացոլելը համարվել է տեխնիկական բացթողում: Նվիրատվություն կատարողի վերաբերյալ նշել են, որ բանկային փաստաթղթերի ուսումնասիրությամբ պարզվել է քաղաքացի Բագրատ Ղազարյանի անուն, ազգանունը, սակայն վերջինիս նույնականացնող և Սահմանադրական օրենքով պահանջվող տվյալը, այն է՝ անձը հաստատող փաստաթղթի համարը, չի ներկայացվել:

1.6 Վերոգրյալի հիման վրա արձանագրվել է, որ Կուսակցության՝

1) 2023 թվականի ընթացքում «Իրավունք մեդիա» ՍՊԸ-ից ստացված ընդհանուր 410,000 (չորս հարյուր տասը հազար) ՀՀ դրամ գումարը,

2) 2024 թվականի ընթացքում «Իրավունք մեդիա» ՍՊԸ-ից ստացված 100,000 (հարյուր հազար) ՀՀ դրամ գումարը,

3) 2024 թվականի ընթացքում «Բիզնես Զեթ-Փիար» գովազդային հրատարակչություն ՍՊԸ-ից ստացված ընդհանուր 300,000 (երեք հարյուր հազար) ՀՀ դրամ գումարը,

4) 2023 թվականին ստացված՝ 243,500 ՀՀ դրամ չնույնականացված մուտքը առերևույթ համարվում են չթույլատրված նվիրատվություններ:

Այսպիսով, 2023 և 2024 թվականների ընթացքում Կուսակցությունը ստացել է ընդհանուր՝ 1,053,500 ՀՀ դրամի չափով առերևույթ չթույլատրված նվիրատվություններ:

1.7 Հանձնաժողովը նշվածի հիման վրա հայտնաբերել է, որ առերևույթ առկա են Օրենսգրքի 189.16-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված զանցանքի հատկանիշներ և 2026 թվականի ապրիլի 18-ի թիվ 01/1088-2026 գրությամբ Հայկ Բաբուխանյանին հրավիրել է նշված

գրությունը ստանալուց հետո՝ 3-րդ աշխատանքային օրը՝ ժամը 14:00-ին, ներկայանալ Հանձնաժողով, վարչական իրավախախտման վերաբերյալ արձանագրություն կազմելուն, իսկ 5-րդ աշխատանքային օրը՝ ժամը 15:00-ին՝ գործի քննությանը մասնակցելու նպատակով:

Նշված ծանուցումը Հայկ Բաբուխանյանը ստացել է 2026 թվականի ապրիլի 21-ին (հիմք՝ էլեկտրոնային հավաստում):

1.8 Հայկ Բաբուխանյանը 2026 թվականի ապրիլի 22-ի թիվ Մ-1978-2026 դիմումով հայտնել է, որ ցանկանում է ծանոթանալ վարչական իրավախախտման վերաբերյալ գործի նյութերին, միաժամանակ՝ միջնորդել է ապրիլի 29-ին նշանակված գործի քննությունը հետաձգել, քանի որ Կուսակցությունը ներգրավված է 2026 թվականի հունիսի 7-ին կայանալիք խորհրդարանական ընտրություններին: Այդ կապակցությամբ հայցել է նշանակված գործի քննությունը հետաձգել և նշանակել ընտրություններից հետո:

1.9 Հանձնաժողովի 2026 թվականի ապրիլի 27-ի թիվ 01/1179-2026 գրությամբ միջնորդությունը բավարարվել է մասնակի և գործի քննությունը հետաձգվել ու նշանակվել է 2026 թվականի մայիսի 13-ին՝ ժամը 15:00-ին: Միաժամանակ, վերջինիս տեղեկացվել է, որ կարող է գործի նյութերին ծանոթանալ 2026 թվականի մայիսի 6-ին՝ ժամը 15:00-ին՝ Հանձնաժողով ներկայանալով:

1.10 2026 թվականի ապրիլի 27-ին պատշաճ ծանուցված Հայկ Բաբուխանյանի բացակայությամբ կազմվել է վարչական իրավախախտման վերաբերյալ թիվ 71/26 ՎԻՎ արձանագրությունը՝ Օրենսգրքի 189.16-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված առերևույթ իրավախախտման հատկանիշներով:

1.11 2026 թվականի մայիսի 13-ին վարչական իրավախախտման վերաբերյալ գործի քննությանը մասնակցելու նպատակով Հանձնաժողով են ներկայացել Կուսակցության նախագահ Հայկ Բաբուխանյանը և վերջինիս ներկայացուցիչ՝ փաստաբան Լևոն Բաղդասարյանը (այսուհետ՝ նաև Ներկայացուցիչ) և միջնորդություն են ներկայացրել գործի քննությունը հետաձգել՝ գործի նյութերին ծանոթանալու նպատակով՝ խնդրելով դրանք տրամադրել էլեկտրոնային փոստով ուղարկելու միջոցով: Հանձնաժողովը բավարարել է ներկայացված միջնորդությունը և գործի քննության օր է նշանակել 2026 թվականի մայիսի 18-ը, իսկ 2026 թվականի մայիսի 14-ի թիվ 01/1390-2026 գրությամբ էլեկտրոնային եղանակով տրամադրել է գործի նյութերը:

1.12 2026 թվականի մայիսի 18-ին՝ ժամը 16:00-ին, Հայկ Բաբուխանյանի և վերջինիս ներկայացուցիչ Լևոն Բաղդասարյանի մասնակցությամբ տեղի է ունեցել գործի քննություն:

II. Վարույթի մասնակցի ներկայացրած դիրքորոշումներն ու պարզաբանումները

2.1 Գործի քննության ընթացքում Հայկ Բաբուխանյանի ներկայացուցիչ Լևոն Բաղդասարյանը հայտնեց, որ գտնում է՝ կուսակցությունների կողմից իրավաբանական անձանցից, «երրորդ» անձանցից և «դրսի ռեզիդենտներից» նվիրատվություն ստանալու Սահմանադրական օրենքով նախատեսված արգելքը, ըստ էության, վերաբերում է «օտար» անձանց կողմից նվիրատվություն ստանալու արգելքին: Ճիշտ է Սահմանադրական օրենքով նման կարգավորում առկա չէ, սակայն, իր կարծիքով, դա բխում է օրենքի տրամաբանությունից: Ներկայացուցիչը հավելեց նաև, որ Սահմանադրական օրենքի կարգավորումները սույն գործի հանգամանքների նկատմամբ կիրառելիս պետք է հաշվի առնել այն հանգամանքը, որ Կուսակցությունն իր ստեղծած կազմակերպությունից, իր «զավակից» ստացել է գումարներ, իսկ Սահմանադրական օրենքի տրամաբանությունը կոռուպցիոն ռիսկերի չեզոքացումն է, ոչ թե նման դեպքերի բացառումը, ուստի Հանձնաժողովին առաջարկել է այդ հանգամանքն էլ հաշվի առնել, քանի որ, ըստ էության, գերակա իրավունքն է:

Նախագահողի կողմից հնչեցված հարցին, թե արդյո՞ք «Իրավունք մեդիա» ՍՊԸ-ն հիմնադրվել է Կուսակցության կողմից, թե՞ կուսակցության ներկայացուցիչների կողմից՝ Հայկ Բաբուխանյանը պատասխանել է, որ այն հիմնադրվել է Կուսակցության կողմից, այն լույս է տեսնում 1989 թվականից և ստեղծման պահից ինքը՝ Հայկ Բաբուխանյանն է հանդիսանում «Իրավունք» թերթի գլխավոր խմբագիրը: Հավելեց նաև, որ բոլոր թերթերի վրա դրված է Կուսակցության զինանշանը: Թերթի մեկ օրինակը Հայկ Բաբուխանյանը հանձնեց Հանձնաժողովին:

Նախագահողը հայտնեց, որ նման տվյալներ նախկինում Կուսակցությունը ևս հայտնել է, սակայն Արդարադատության նախարարության իրավաբանական անձանց պետական ռեգիստրի գործակալության էլեկտրոնային շտեմարանի տվյալների համաձայն՝ հիմնադիր հանդիսանում են կուսակցության ներկայացուցիչները և ոչ թե կուսակցությունը, իսկ թերթը գրանցված է ՍՊԸ-ի կարգավիճակով:

Հայկ Բաբուխանյանը հայտնեց, որ 1989 թվականին «Իրավունք Մեդիա» ՍՊԸ-ն հիմնադրել է Կուսակցությունը, սակայն 2006-2007 թվականներին ենթարկվել է ճնշումների իշխանությունների կողմից, ուստի գրանցվել է որպես ՍՊԸ նույն անձանց կողմից, ովքեր հանդիսանում են կուսակցության ղեկավարությունը, բայց թերթը հիմնադրվել է 1989 թվականին Կուսակցության կողմից:

Հայկ Բաբուխանյանը հավելեց, որ թերթը գործում է Կուսակցության շենքում, ու Կուսակցության կողմից կոմունալ վճարները և հարկերը վճարելու նպատակով «Իրավունք Մեդիա» ՍՊԸ-ն գումարները փոխանցել է կուսակցությանը, որ լույսերը չանջատեն ու թերթն էլ կարողանա շարունակել տպագրվել:

Նախագահողը Հայկ Բաբուխանյանին հարց ուղղեց, թե արդյո՞ք վերջինս ունի որևէ հիմք, որ կապացուցի «Իրավունք մեդիա» ՍՊԸ-ի՝ 1989 թվականին Կուսակցության կողմից հիմնադրված թերթի իրավահաջորդ լինելը, որին ի պատասխան Հայկ Բաբուխանյանը հայտնեց, որ թերթը 1989 թվականի հիմնադրումից ի վեր միշտ իր վրա կրել է Կուսակցության զինանշանը, ինչը վկայում է այն մասին, որ այն միշտ պատկանել է Կուսակցությանը, իսկ Ներկայացուցիչը հավելեց, որ թերթը իր վրա կրում է Կուսակցության «պաշտոնական» թերթ հանդիսանալու մասին նշում, և փաստացի հանդիսանում է Կուսակցության պաշտոնաթերթը:

2.2 «Բիզնես Զեթ-Փիար» գովազդային հրատարակչություն ՍՊԸ-ի մասով Հայկ Բաբուխանյանը հայտնեց, որ այդ մասով վրիպակ է թույլ տրվել իրենց հաշվապահության համար պատասխանատու անձի կողմից: Սահմանադրական օրենքի 2021 թվականի փոփոխություններից հետո Կուսակցության հաշվապահության համար պատասխանատու անձը շփոթվել է և «նվիրատվության» փոխարեն նշել է «փոխառություն» կամ «բարեգործություն», իսկ բարեգործության մասին Սահմանադրական օրենքում խոսք չկա: «Բիզնես Զեթ-Փիար» գովազդային հրատարակչություն ՍՊԸ-ն հիմնադրել է ինքը՝ Հայկ Բաբուխանյանը, և գումարները կազմակերպության կողմից փոխանցվել են Կուսակցության կոմունալ ծախսերը և հարկերը հոգալու համար: Հայկ Բաբուխանյանի դիրքորոշման համաձայն՝ գործող իրավակարգավորումները կարող են եռակի մեկնաբանության ենթարկվել, և ինքը որպես նախկին օրենսդիր գտնում է, որ իրավաբանական անձանց կողմից կուսակցություններին փոխառությամբ գումար տրամադրելը չպետք է արգելք հանդիսանա: Հայտնեց նաև, որ ինքը իրեն չի կարող կաշառել՝ միաժամանակ հանդիսանալով և՛ «Բիզնես Զեթ-Փիար» գովազդային

հրատարակչություն ՍՊԸ-ի հիմնադիր, և՛ Կուսակցության ղեկավար, ու տվյալ դեպքում կոռուպցիա որպես այդպիսին չկա: Ինքը իր հիմնադրած կազմակերպության կողմից Կուսակցությանն է փոխանցել գումար, որ կատարի կոմունալով վճարումները: Իսկ Ներկայացուցիչը հավելեց, որ թեև առերևույթ խախտում կա, սակայն հետևանքը այն չէ, ինչ դրված է Սահմանադրական օրենքի տրամաբանության տակ:

Նախագահողը Հայկ Բաբուխանյանին հայտնեց, որ հաշվի առնելով Հանձնաժողովի կողմից նախկինում դրսևորած դիրքորոշումը՝ քանի որ Հայկ Բաբուխանյանը առաջին անգամ է նախազգուշացվում սույն իրավախախտումը կատարելու համար, գումարը պետական բյուջե փոխանցելու դեպքում կատարված իրավախախտումը կգնահատվի որպես նվազ նշանակության և գործի վարույթը կկարճվի, ինչին ի պատասխան՝ Հայկ Բաբուխանյանը հայտնեց, որ հրաժարվում է գումարը փոխանցել պետական բյուջե:

2.3 Կուսակցությանը 243,500 (երկու հարյուր քառասուներեք հազար հինգ հարյուր) ՀՀ դրամի չափով անանուն փոխանցված նվիրատվության մասով Հայկ բաբուխանյանը հայտնեց, որ իրենք դիմել են «Արդշինբանկ» ԲԲԸ-ին՝ փոխանցողի մասին տվյալներ ձեռք բերելու նպատակով, սակայն պատասխան է ստացել, որ «Արդշինբանկ» ԲԲԸ-ի կանոնակարգի համաձայն՝ 400,000 ՀՀ դրամ գումարը չգերազանցող փոխանցումներ կատարելու դեպքում անձնագրային տվյալներ անձից չի պահանջվում: Ներկայացուցիչը հավելեց, որ տվյալ դեպքում Կուսակցության մեղքով չէ, որ նվիրատուի անձը հաստատող փաստաթղթի տվյալները հայտնի չեն և հայտնեց, որ «Արդշինբանկ» ԲԲԸ-ից ստացած տվյալներով հայտնի է նվիրատվություն կատարած անձի անունը և ազգանունը:

Ի պատասխան այդ փաստարկին Հանձնաժողովը շեշտեց, որ անձին նույնականացնելու համար միայն անունը և ազգանունը բավարար չեն, իսկ Սահմանադրական օրենքի պահանջները նաև անձը հաստատող փաստաթղթի տվյալները ներկայացնելու համար՝ նպատակ ունի նվիրատվություն կատարած անձի նույնականացումն ապահովել: Նախագահողի այն հարցին ի պատասխան, թե արդյո՞ք Հայկ Բաբուխանյանը ճանաչում է Բագրատ Ղազարյան անունով անձի՝ վերջինս հայտնեց, որ չի ճանաչում:

Ներկայացուցչի հարցին առ այն, թե արդյո՞ք օրենսդրական կարգավորումները թույլ են տալիս Հանձնաժողովին տեղեկացնել կուսակցություններին իրավախախտման առկայության մասին, եթե պարզվում է, որ վերջինս իրավախախտումը կատարել է օրենքի չիմացությամբ

պայմանավորված ու հնարավորություն տալ վերջինիս գործել իրավաչափորեն՝ չենթարկելով պատասխանատվության, Հանձնաժողովն արձագանքեց, որ նման դեպքերում կատարված իրավախախտումը Հանձնաժողովի կողմից գնահատում է որպես նվազ նշանակության և կայացվում վարչական իրավախախտման վերաբերյալ գործի վարույթը կարճելու մասին որոշում, երբ իրավախախտումը կատարվել և ծանուցվել է առաջին անգամ, ինչպես նաև մինչև գործի քննությունը նվիրատվության գումարը պետական բյուջե փոխանցած լինելու պայմաններում: Ներկայացուցիչը արձագանքեց, որ սոցիալական պետության պարագայում պետք է նաև հաշվի առնվի Կուսակցության սոցիալական դրությունը, քանի որ վերջինս չունի ֆինանսական միջոցներ ու չի կարող գումարները փոխանցել պետական բյուջե:

III. Գործի քննության ընթացքում հաստատված հանգամանքները

Հանձնաժողովն ուսումնասիրել է թիվ ՎԻՎ/57/2025 վարչական վարույթում առկա նյութերը, կատարել հանգամանքների քննություն, որի արդյունքում հաստատված է համարում.

3.1 Արդարադատության նախարարության իրավաբանական անձանց պետական ռեգիստրի գործակալության էլեկտրոնային շտեմարանի տվյալների համաձայն՝ Հայկ Բաբուխանյանը 2008 թվականի մարտի 28-ից հանդիսանում է Կուսակցության գործադիր մարմնի ղեկավարը՝ Կուսակցության նախագահը:

3.2 Կուսակցության Տարեկան հաշվետվությունների ուսումնասիրությունից պարզ է դառնում, որ Կուսակցությունը.

- 2023 և 2024 թվականների ընթացքում «Իրավունք մեդիա» ՍՊԸ-ից ստացել է ընդհանուր 510,000 (հինգ հարյուր տաս հազար) ՀՀ դրամի չափով նվիրատվություններ,
- 2024 թվականի ընթացքում «Բիզնես Զեթ-Փիար» գովազդային հրատարակչություն ՍՊԸ-ից ստացել է ընդհանուր 300,000 (երեք հարյուր հազար) ՀՀ դրամի չափով նվիրատվություններ,
- 2023 թվականին տեղի է ունեցել չնույնականացված մուտք՝ 243,500 (երկու հարյուր քառասուներեք հազար հինգ հարյուր) ՀՀ դրամ գումարի չափով:

Այսպիսով, ընդհանուր առմամբ 2023-2024 թվականների ընթացքում Կուսակցությունը ստացել է 1,053,500 ՀՀ դրամի չափով չթույլատրված նվիրատվություններ: Կուսակցության

բանկային հաշվի քաղվածքով չեն ստացվել տեղեկություններ վերոնշյալ գումարները պետական բյուջե փոխանցված լինելու մասին և վերոնշյալ գումարները պետական բյուջե փոխանցված լինելը հավաստող ապացույց չի ներկայացվել Հանձնաժողով:

3.3 Արդարադատության նախարարության իրավաբանական անձանց պետական ռեգիստրի գործակալության էլեկտրոնային շտեմարանի տվյալների համաձայն՝ «Իրավունք մեդիա» ՍՊԸ-ն հիմնադրվել է 2008 թվականի մայիսի 15-ին: «Իրավունք մեդիա» ՍՊԸ-ի հիմնադիր-մասնակիցներն են՝ Հայկ Բաբուխանյանը, Նաիրա Զոհրաբյանը, Հովհաննես Գալաջյանը և Գեղամ Գրիգորյանը, իսկ այժմ՝ մասնակիցներն են՝ Հայկ Բաբուխանյանը, Արման Գալաջյանը, Նվարդ Գրիգորյանը, Լևոն Գրիգորյանը և Զարուհի Բաբուխանյանը: Ընդ որում, Արման Գալաջյանը, Նվարդ Գրիգորյանը և Լևոն Գրիգորյանը չեն հանդիսանում Կուսակցության մշտապես գործող ղեկավար մարմնի անդամներ:

3.4 Արդարադատության նախարարության իրավաբանական անձանց պետական ռեգիստրի գործակալության էլեկտրոնային շտեմարանի տվյալների համաձայն՝ «Իրավունք մեդիա» ՍՊԸ-ի դեպքում 2008 թվականի մայիսի 15-ին ոչ թե նախկինում գրանցված կազմակերպության վերագրանցում է տեղի ունեցել, այլ՝ հիմնադրման միջոցով սկզբնական պետական գրանցում:

3.5 Արդարադատության նախարարության իրավաբանական անձանց պետական ռեգիստրի գործակալության էլեկտրոնային շտեմարանի տվյալների համաձայն՝ «Բիզնես Զեթ-Փիար» գովազդային հրատարակչություն ՍՊԸ-ն հիմնադրվել է 2007 թվականի մարտի 22-ին, իսկ հիմնադրման օրվանից մինչ այժմ մասնակիցներն են Հայկ Բաբուխանյանը, Մարիամ Բաբուխանյանը և Վարդան Աստվածատրյանը: Ընդ որում, Մարիամ Բաբուխանյանը չի հանդիսանում Կուսակցության մշտապես գործող ղեկավար մարմնի անդամ:

3.6 2023 թվականին տեղի ունեցած չնույնականացված մուտքի՝ 243,500 (երկու հարյուր քառասուներեք հազար հինգ հարյուր) ՀՀ դրամ գումարի առնչությամբ Կուսակցության բանկային հաշվի քաղվածքում նվիրատվություն կատարող անձի՝ Սահմանադրական օրենքով պահանջվող նույնականացման տվյալները բացակայում են, իսկ նվիրատուի վերաբերյալ Կուսակցությունը հայտնել է միայն նվիրատվություն կատարած անձի անունը և ազգանունը՝ Բագրատ Ղազարյան, սակայն Սահմանադրական օրենքով պահանջվող տվյալը՝ անձը հաստատող փաստաթղթի համարը, չի ներկայացրել:

3.7 Այսպիսով, վերոգրյալ արձանագրումներից պարզ է դառնում, որ Կուսակցությունը 2023 թվականի ընթացքում ստացել է 1,053,500 ՀՀ դրամի չափով չթույլատրված նվիրատվություն:

3.8 Կուսակցության կողմից Հանձնաժողով չի ներկայացվել վերոնշյալ գումարները պետական բյուջե փոխանցված լինելը հավաստող ապացույց:

IV. Որոշումն ընդունելու իրավական հիմքերը և հիմնավորումները

4.1 Սահմանադրական օրենքի՝ մինչև 2025 թվականի ապրիլի 1-ը գործած խմբագրությամբ 22-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի համաձայն՝ կուսակցությունը պարտավոր է յուրաքանչյուր տարի Հայաստանի Հանրապետության հրապարակային ծանուցումների պաշտոնական ինտերնետային կայքում՝ http://www.azdarar.am, հրապարակել ֆինանսական միջոցների աղբյուրների և ծախսերի, ինչպես նաև գույքի վերաբերյալ հաշվետվությունը: Կուսակցությունը Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի պահանջով պարտավոր է ներկայացնել հաշվետվության ստուգման համար անհրաժեշտ տեղեկություններ, փաստաթղթեր, այդ թվում՝ բանկային գաղտնիք կազմող տեղեկություններ, արժեթղթերի հետ կապված գործարքների վերաբերյալ տեղեկություններ, ապահովագրական գաղտնիք կազմող տեղեկություններ, ինչպես նաև վարկային տեղեկատվություն:

4.2 Սահմանադրական օրենքի՝ մինչև 2025 թվականի ապրիլի 1-ը գործած խմբագրությամբ 27-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ կուսակցությունը պարտավոր է յուրաքանչյուր տարի՝ հաշվետու տարվան հաջորդող մայիսի 31-ից ոչ ուշ, Հայաստանի Հանրապետության հրապարակային ծանուցումների պաշտոնական ինտերնետային կայքում հրապարակել հաշվետու տարվա ընթացքում կուսակցության ֆինանսական միջոցների աղբյուրների և ծախսերի, ինչպես նաև գույքի մասին հաշվետվությունը (այսուհետ՝ տարեկան հաշվետվություն), իսկ սույն օրենքով նախատեսված դեպքերում՝ նաև դրա վերաբերյալ աուդիտորական եզրակացությունը: (...), իսկ նույն հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ Հաշվետու տարվա ընթացքում կուսակցության հաշվետվությունը պետք է տվյալներ պարունակի կուսակցության հաշվում մուտք արված միջոցների աղբյուրների և ծավալի, այդ միջոցների ծախսման, ինչպես նաև ունեցած գույքի մասին՝ նշելով դրա արժեքը:

4.3 Սահմանադրական օրենքի 24-րդ հոդվածի 4-րդ մասի 2-րդ կետի համաձայն՝ նվիրատվություններ չեն թույլատրվում՝ ցանկացած տեսակի իրավաբանական անձանցից, այդ թվում՝ օտարերկրյա իրավաբանական անձանցից և միջազգային կազմակերպություններից.

4.4 Սահմանադրական օրենքի 24-րդ հոդվածի 4-րդ մասի 5-րդ կետի համաձայն՝ նվիրատվություններ չեն թույլատրվում՝ անանուն անձանցից:

4.5 Սահմանադրական օրենքի՝ մինչև 2025 թվականի ապրիլի 1-ը գործած խմբագրությամբ 24-րդ հոդվածի 7-րդ մասի համաձայն՝ նվիրատվություն կատարող անձինք պարտավոր են նշել իրենց անունը, ազգանունը և անձը հաստատող փաստաթղթի համարը:

4.6 Նույն հոդվածի 6-րդ մասի համաձայն՝ չթույլատրված նվիրատվությունների ստացման դեպքում կուսակցությունը պարտավոր է ստանալուց հետո՝ երկու շաբաթվա ընթացքում, դրանք փոխանցել պետական բյուջե:

4.7 Օրենքի 24-րդ հոդվածի 1-ին մասի 27-րդ կետի համաձայն՝ Հանձնաժողովը ստուգում է կուսակցությունների տարեկան հաշվետվությունների ներկայացման պահանջների պահպանումը և դրանցում առկա տեղեկատվության և տվյալների արժանահավատությունն ու ամբողջականությունը:

4.8 Օրենքի 24-րդ հոդվածի 1-ին մասի 28-րդ կետի համաձայն՝ Հանձնաժողովը քննում և լուծում է կուսակցությունների ֆինանսական գործունեությանը և կուսակցությունների տարեկան հաշվետվություններին առնչվող խախտումների վերաբերյալ գործերը:

4.9 Օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքով նախատեսված վարչական իրավախախտումների վերաբերյալ վարույթի հետ կապված հարաբերությունները կարգավորվում են Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքով, ինչպես նաև «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով՝ հաշվի առնելով սույն օրենքով սահմանված առանձնահատկությունները:

4.10 Օրենսգրքի 14-րդ հոդվածի համաձայն՝ պաշտոնատար անձինք ենթակա են վարչական պատասխանատվության այնպիսի վարչական իրավախախտումների համար, որոնք կապված են կառավարման կարգի, պետական ու հասարակական կարգի, բնության, բնակչության առողջության պահպանության ոլորտում սահմանված կանոնները և մյուս այն կանոնները

չպահպանելու հետ, որոնց կատարման ապահովումը մտնում է նրանց պաշտոնեական պարտականությունների մեջ: Սույն օրենսգրքի իմաստով՝ կուսակցության պաշտոնատար անձ է համարվում կուսակցության կանոնադրության կամ այլ փաստաթղթերի հիմքով՝ սույն օրենսգրքով պատասխանատվություն առաջացնող գործողությունների (անգործության) համար պատասխանատու կուսակցության ղեկավար մարմնի անդամը կամ կուսակցության՝ կազմակերպական-տնօրինչական, վարչատնտեսական գործառույթներ իրականացնող պատասխանատու անդամը կամ աշխատողը:

4.11 «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ վարչական մարմինը պարտավոր է ապահովել փաստական հանգամանքների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննարկումը՝ բացահայտելով գործի բոլոր, այդ թվում՝ վարույթի մասնակիցների օգտին առկա հանգամանքները:

4.12 Օրենսգրքի 189.16-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ կուսակցությունների կողմից օրենքով սահմանված չափից ավելի կամ չթույլատրված նվիրատվությունները օրենքով սահմանված ժամկետներում պետական բյուջե կամ նվիրատուին չփոխանցելը՝ առաջացնում է տուգանքի նշանակում կուսակցության պաշտոնատար անձանց նկատմամբ՝ սահմանված նվազագույն աշխատավարձի հարյուրապատիկից մինչև հարյուրհինգապատիկի չափով:

4.13 Օրենսգրքի 252-րդ հոդվածի համաձայն՝ մարմինը ապացույցները գնահատում է իր ներքին համոզմունքով, որը հիմնված է գործի՝ իրենց ամբողջությամբ վերցված բոլոր հանգամանքների համակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտման վրա, ղեկավարվելով օրենքով և իրավագիտակցությամբ:

4.14 Օրենսգրքի 244.17-րդ հոդվածի համաձայն՝ Օրենսգրքի 189.16-րդ հոդվածով նախատեսված վարչական իրավախախտումների վերաբերյալ գործերը քննում և վարչական տույժեր է նշանակում Հանձնաժողովը:

4.15 Օրենքի 26-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ Հանձնաժողովը Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքով նախատեսված վարչական իրավախախտումների վերաբերյալ վարույթի արդյունքում ընդունում է որոշումներ, որոնք կարող են բողոքարկվել «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքին համապատասխան՝ դատական կարգով:

4.16 Օրենսգրքի 282-րդ հոդվածի համաձայն՝ քննելով վարչական իրավախախտման վերաբերյալ գործը, մարմինը (պաշտոնատար անձը) ընդունում է հետևյալ որոշումներից մեկը՝ 1) վարչական տույժ նշանակելու մասին, 2) գործի վարույթը կարճելու մասին: Գործի վարույթը կարճելու մասին որոշում ընդունվում է նաև բանավոր դիտողություն հայտարարելու դեպքում:

Սույն գործով հաստատված փաստական հանգամանքների նկատմամբ կիրառելի իրավական նորմերի վերլուծության արդյունքում Հանձնաժողովն արձանագրում է.

Օրենսգրքի 189.16-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված դրույթը նպատակ է հետապնդում ապահովել հաշվետու տարվա ընթացքում Կուսակցության ստացած և ծախսած միջոցների մասին հանրային հաշվետվողականությունը, կոռուպցիոն ռիսկերից զերծ գործունեությունը: Նշված դրույթի նպատակն է՝ **բոլոր կուսակցությունների համար հավասար հնարավորությունների ապահովումը, ինչպես նաև բոլոր կուսակցությունների ֆինանսական խոցելիության նվազեցման երաշխիքների ապահովումը:**

Նշված դրույթը նպատակ է հետապնդում վերացնել քաղաքական ֆինանսավորման թափանցիկությանն առնչվող այնպիսի ռիսկերը, ինչպիսիք են, օրինակ՝ **անանուն կամ իրավաբանական անձանց կողմից կատարված** նվիրատվության ներգրավումը: Այս զանցակազմի օբյեկտիվ կողմը դրսևորվում է բացառապես անգործությամբ, որն արտահայտվում է կուսակցության իրավասու պաշտոնատար անձի կողմից «Կուսակցությունների մասին» սահմանադրական օրենքով իր վրա անմիջականորեն դրված պարտականությունների չկատարմամբ: Մասնավորապես, ՀՀ օրենսդրությամբ ամրագրված են թույլատրելի նվիրատվությունների առավելագույն չափեր և հստակ արգելքներ՝ նվիրատվությունների որոշակի աղբյուրների նկատմամբ: Թույլատրված աղբյուրներից ստացված, սակայն սահմանված չափերի գերազանցման պարագայում օրենսդիրը նախատեսել է իմպերատիվ պահանջ՝ գումարը վերադարձնել նվիրատուին կամ, օրենքով նախատեսված դեպքերում, փոխանցել պետական բյուջե: Իսկ չթույլատրված աղբյուրներից նվիրատվություններ ստանալու դեպքում սահմանված է պարտադիր պահանջ՝ այդ միջոցները օրենքով սահմանված ժամկետում փոխանցել պետական բյուջե:

Հետևաբար, զանցակազմն առկա է այն ժամանակ, երբ օրենքով նախատեսված ժամկետներում չեն իրականացվում գումարի վերադարձման կամ պետական բյուջե փոխանցման

պարտադիր գործողությունները: Ընդ որում, Հանձնաժողովն ընդգծում է, որ սույն զանցակազմն ունի ձևական կառուցվածք, ինչը նշանակում է, որ օբյեկտիվ կողմը համարվում է ավարտված և ամբողջությամբ դրսևորված այն պահից, երբ սպառվում է գումարի վերադարձի կամ պետական բյուջե փոխանցման համար օրենքով հատկացված ժամանակահատվածը, իսկ պահանջվող գործողությունը փաստացի մնում է չկատարված:

Այսպիսով, տվյալ իրավախախտման օբյեկտիվ կողմի պարտադիր տարրերն են իրավական նորմով նախատեսված գործողությունը կատարելու պարտականության առկայությունը, դրա փաստացի չկատարումը (անգործությունը) և օրենքով սահմանված հստակ ժամկետի խախտումը:

Հարկ է ընդգծել, որ Օրենսդրի կողմից նման կարգավորումների՝ Սահմանադրական օրենքով ամրագրումն ինքնանպատակ չէ և միտված է կարգավորելու կուսակցությունների մուտքերը՝ կանխելու կուսակցությունների ստվերային ֆինանսավորումները, նպաստելու կուսակցությունների միջև ավելի հավասար պայմանների ապահովմանը, խթանելու ֆինանսական թափանցիկության քաղաքականությունը՝ նպաստելով արդարությանը և նվազեցնելով քաղաքական կոռուպցիայի ռիսկը: Նման կարգավորումների պայմաններում սահմանափակվում են ապօրինի, ստվերային ֆինանսավորումները, ինչը խթանում է քաղաքական գործընթացներում լայն հասարակության ավելի մեծ ներգրավվածությունը և մասնակցությունը, ինչպես նաև բարձրացնում է քաղաքացիների վստահությունը քաղաքական ուժերի նկատմամբ:

Միևնույն ժամանակ, իրավաբանական անձանց կողմից կուսակցություններին նվիրատվության կատարումն արգելող իրավակարգավորումների հիմքում դրված է քաղաքական գործընթացների վրա իրավաբանական անձանց ազդեցությունը չեզոքացնելու Օրենսդրի նպատակը, քանի որ իրավաբանական անձինք հաճախ ունենում են զգալի ֆինանսական ռեսուրսներ, որոնք քաղաքականության մեջ օգտագործվելիս հանրային շահի փոխարեն հանգեցնում են այդ կազմակերպությունների շահերի սպասարկմանը: Բացի այդ, վերը նշված կարգավորման արդյունքում ապահովվում է, որ կուսակցություններն ավելի շատ ակնկալեն անհատների՝ ֆիզիկական անձանց աջակցությունը, ինչն ենթադրում է հանրության աջակցություն՝ կուսակցության վարած քաղաքականությանը կամ գաղափարախոսությանը: Մյուս կողմից, վերը նշված արգելքների բացակայության պայմաններում հասարակությունը

կարող է ընկալել, թե կուսակցությունները մեծապես ֆինանսավորվում են իրավաբանական անձանց կողմից, ինչն էլ, իր հերթին կարող է խաթարել վստահությունը քաղաքական համակարգի նկատմամբ:

Իսկ ինչ վերաբերում է օրենքով սահմանված չափերը գերազանցող կամ չթույլատրված աղբյուրներից ստացված նվիրատվությունների առնչությամբ կուսակցության պաշտոնատար անձի՝ Սահմանադրական օրենքով նախատեսված պարտականություններին, ապա դրանք օրենքով սահմանված ժամկետներում պետական բյուջե փոխանցելու կամ նվիրատուին վերադարձնելու իմպերատիվ պահանջն ապահովում է վերոնշյալ սահմանափակումների գործնական կիրառումը: Այս մեխանիզմը կուսակցություններին զրկում է ապօրինի ֆինանսական ռեսուրսներ տնօրինելու հնարավորությունից՝ դրանով իսկ երաշխավորելով քաղաքական համակարգի բարեվարքությունը և քաղաքական ուժերի միջև արդար ու հավասար մրցակցային միջավայրի պահպանումը: Նորմը ծառայում է որպես ֆինանսական վերահսկողության կանխարգելիչ գործիք, որը պաշտպանում է հանրային շահը՝ թույլ չտալով անօրինական կապիտալի ներհոսքը քաղաքական գործընթացներ:

Խախտման հիմքով պատասխանատվություն սահմանելու հարցը որոշելու համար Հանձնաժողովը գտնում է, որ անհրաժեշտ է յուրաքանչյուր գործով գնահատել, արդյո՞ք տվյալ խախտումը հանգեցրել է նորմով պաշտպանվող իրավահարաբերությունների խաթարմանը: Այս առնչությամբ էական է խախտման (արարքի) որակական կողմը:

Արարքի որակական կողմը գնահատելիս անհրաժեշտ է հաշվի առնել՝ արդյոք արարքը կարող է պարունակել Օրենսգրքով սահմանված զանցանքի հատկանիշներ և այնպիսի էական վնաս է պատճառվել ֆիզիկական կամ իրավաբանական անձին, հասարակությանը, պետությանը, որի հիմքով սահմանված պատասխանատվությունը կդիտարկվի համաչափ:

Սույն գործով ձեռք բերված տվյալներով հաստատվել է, որ 2023-2024 թվականների ընթացքում Կուսակցությունը ստացել է ընդհանուր 1,053,500 ՀՀ դրամի չափով չթույլատրված նվիրատվություններ: Մասնավորպես՝ «Իրավունք մեդիա» ՍՊԸ-ի կողմից 2023 և 2024 թվականների ընթացքում Կուսակցությանը կատարվել է ընդհանուր առմամբ 510,000 (հինգ հարյուր տասը հազար) ՀՀ դրամի չափով նվիրատվություն, «Բիզնես Զեթ-Փիար» գովազդային հրատարակչություն ՍՊԸ-ից 2024 թվականի ընթացքում Կուսակցությանը կատարվել է 300,000 (երեք հարյուր հազար) ՀՀ դրամի չափով նվիրատվություն, ինչպես նաև 2023 թվականին տեղի է

ունեցել չնույնականացված մուտք՝ 243,500 (երկու հարյուր քառասուներեք հազար հինգ հարյուր) ՀՀ դրամ գումարի չափով:

Անդրադառնալով Հայկ Բաբուխանյանի և Ներկայացուցչի այն պնդմանը, որի համաձայն՝ Կուսակցությանը նվիրատվություն կատարելով չի խաթարվել օրենսգրքով պաշտպանվող իրավահարաբերությունների էությունը, ինչպես նաև Հայկ Բաբուխանյանի այն դիրքորոշմանը, որ ինքն է հանդիսանում «Բիզնես Զեթ-Փիար» գովազդային հրատարակչություն ՍՊԸ-ի հիմնադիրը և տրամադրված գումարները օգտագործվել են կոմունալների վճարների և հարկերի վճարման նպատակով, Հանձնաժողովը փաստում է, որ ցանկացած տեսակի իրավաբանական անձանց կողմից կուսակցություններին նվիրատվություններ կատարելու արգելքը Հայաստանի Հանրապետության օրենսդրության հստակ պահանջն է, այլ ոչ թե Հանձնաժողովի կամայական որոշումը: Օրենսդիրը վերոնշյալից նախատեսել է միայն մեկ բացառություն, այն է՝ կուսակցության հիմնադրած զանգվածային լրատվության միջոցների և հրատարակչությունների՝ հաշվետու տարում կուսակցությանը փոխանցած միջոցները: Ընդ որում, Օրենսդրի կողմից նման բացառության սահմանումը հիմնավորվում է քաղաքական կուսակցությունների գործունեության բուն էությամբ և կանոնադրական նպատակներով: Մասնավորապես, կուսակցությունների առանցքային գործառույթներից է սեփական գաղափարախոսության տարածումը, հանրային կարծիքի ձևավորումը և հասարակության իրազեկումը, ինչն օբյեկտիվորեն պահանջում է զանգվածային լրատվության միջոցների և հրատարակչական գործունեության ծավալում: Քանի որ օրենքն ուղղակիորեն թույլատրում է կուսակցություններին հիմնադրել նման կառույցներ՝ որպես իրենց քաղաքական նպատակների իրագործման գործիք, տրամաբանական և իրավաչափ է դառնում նաև դրանց ֆինանսական արդյունքի տնօրինումը: Սակայն, սրա առնչությամբ Հանձնաժողովն անհրաժեշտ է համարում ընդգծել, որ Սահմանադրական օրենքը վերոնշյալ բացառությանը զուգահեռ նախատեսել է հստակ պահանջ առ այն, որ կուսակցության տարեկան հաշվետվությունը պետք է պարունակի տվյալներ նաև կուսակցության հիմնադրած զանգվածային լրատվության միջոցների և հրատարակչությունների՝ հաշվետու տարում կուսակցությանը փոխանցած միջոցները՝ **առանձին նշելով զանգվածային լրատվության միջոցների և հրատարակչությունների՝ հաշվետու տարվա գործունեությամբ ստացված շահույթը**:

Հանձնաժողովի դիրքորոշմամբ՝ վիճարկվող ֆինանսական մուտքը չի կարող որակվել որպես կուսակցության հիմնադրած զանգվածային լրատվության միջոցից կատարված

օրինաչափ փոխանցում՝ ելնելով Սահմանադրական օրենքի պահանջների հստակ տրամաբանությունից: Մասնավորապես, նախ և առաջ, անհրաժեշտ է արձանագրել փաստական այն հանգամանքը, որ Արդարադատության նախարարության իրավաբանական անձանց պետական ռեգիստրի գործակալությունից ստացված տվյալների համաձայն՝ «Իրավունք մեդիա» ՍՊԸ-ի դեպքում՝ 2008 թվականի մայիսի 15-ին ոչ թե վերագրանցվել է նախկինում գրանցված նույնանուն կազմակերպությունը, այլ հիմնադրման միջոցով սկզբնական պետական գրանցում է տեղի ունեցել: Ընդ որում, «Իրավունք մեդիա» ՍՊԸ-ի մասնակիցների ցանկում 2008 թվականից ի վեր եղել են Կուսակցության մշտապես գործող ղեկավար մարմնի անդամ չհանդիսացող անձինք:

Հետևաբար, վկայակոչվող իրավաբանական անձը հիմնադրվել է ոչ թե անմիջականորեն կուսակցության, այլ վերջինիս ղեկավար պաշտոններ զբաղեցնող ֆիզիկական անձանց կողմից, որոնք, ի թիվս այլ անձանց, համահիմնադիր են հանդիսացել, մինչդեռ Սահմանադրական օրենքի իմաստով՝ նախատեսված բացառությունը վերաբերում է բացառապես այն իրավաբանական անձանց, որտեղ որպես հիմնադիր հանդես է գալիս հենց կուսակցությունը՝ որպես ինքնուրույն իրավաբանական անձ:

Իրավական տեսանկյունից կուսակցությունը և դրա ղեկավար կամ մյուս անդամները հանդիսանում են իրավունքի առանձին, միմյանցից անկախ սուբյեկտներ: Հետևաբար, ֆիզիկական անձ հանդիսացող կուսակցության ղեկավարների կողմից հիմնադրված ընկերությունը չի կարող նույնացվել «կուսակցության հիմնադրած զանգվածային լրատվության միջոցի կամ հրատարակչության» օրենսդրական հասկացության հետ: Օրենսդիրը հստակ տարանջատել է կուսակցության՝ որպես կազմակերպության ստեղծած իրավունքի սուբյեկտներին նրա անդամների մասնավոր կամ ձեռնարկատիրական նախաձեռնությամբ ստեղծված սուբյեկտներից:

Հանձնաժողովը հարկ է համարում ընդգծել նաև, որ Կուսակցության տարեկան հաշվետվությունը տվյալներ չի պարունակում Սահմանադրական օրենքի 27-րդ հոդվածի 8-րդ մասով սահմանված՝ զանգվածային լրատվության միջոցների և հրատարակչությունների՝ հաշվետու տարվա գործունեությամբ ստացված շահույթի մասին:

Վերոնշյալ փաստական հանգամանքների համադրությամբ՝ «Իրավունք մեդիա» ՍՊԸ-ի կողմից կատարված փոխանցումները նվիրատվություններ են Կուսակցությանը, ուստի Սահմանադրական օրենքի իրավակարգավորումների համաձայն՝ համարվում են չթույլատրված

նվիրատվություններ: Հետևաբար՝ Կուսակցությունը պարտավոր էր դրանք փոխանցել պետական բյուջե:

Ինչ վերաբերում է 2025 թվականի հոկտեմբերի 21-ի թիվ Մ-6419-2025 գրությամբ Կուսակցության ներկայացրած պարզաբանմամբ նշված այն փաստարկին, որ 410,000 ՀՀ դրամի չափով նվիրատվություններից 60,000 ՀՀ դրամը տրված է, որպես փոխառություն, իսկ մնացած գումարների փոխանցման ընթացքում նպատակ դաշտում «փոխառության» փոխարեն սխալմամբ նշվել է «նվիրատվություն», քանի որ մեխանիկորեն վերցված են եղել մինչև 2020 թվականին առկա ձևաթղթերից, ապա Հանձնաժողովը հարկ է համարում վկայակոչել Սահմանադրական օրենքի 24-րդ հոդվածի 1-ին մասը, համաձայն որի՝ կուսակցություններն իրավունք ունեն գույքի, այդ թվում՝ դրամական միջոցների, ներառյալ՝ **փոխառությունների**, երրորդ անձի կողմից կուսակցության պարտքը մարելու, պարտատիրոջ կողմից կուսակցության պարտքը ներելու, ինչպես նաև կուսակցության օգտին կատարվող այլ գործունեության **տեսքով նվիրատվություններ ստանալու ֆիզիկական անձանցից**, բացառությամբ նույն հոդվածի 4-րդ մասով նախատեսված դեպքերի: Իսկ նույն հոդվածի 4-րդ մասով ամրագրված է, որ նվիրատվություններ չեն թույլատրվում ցանկացած տեսակի իրավաբանական անձանցից:

Այս առումով բացառություն են կազմում կուսակցության հիմնադրած զանգվածային լրատվության միջոցները կամ հրատարակչությունները, սակայն ըստ Արդարադատության նախարարության իրավաբանական անձանց պետական ռեգիստրի գործակալության էլեկտրոնային շտեմարանի տվյալների՝ «Իրավունք մեդիա» ՍՊԸ-ն, հիմնադրվել է, և սկզբնական պետական գրանցումը տեղի է ունեցել 2008 թվականի մայիսի 15-ին, ընդ որում, հիմնադիրների կամ մասնակիցների կազմում Կուսակցությունը երբեք չի եղել, իսկ Կուսակցության մշտապես գործող ղեկավար մարմնի անդամներից բացի այլ ֆիզիկական անձինք ևս եղել են «Իրավունք մեդիա» ՍՊԸ-ի մասնակիցներ:

Նույն դիրքորոշումը առավել ևս վերաբերում է «Բիզնես Զեթ-Փիար» գովազդային հրատարակչություն ՍՊԸ-ին, որը ևս չի հանդիսանում Կուսակցության հիմնադրած զանգվածային լրատվության միջոց կամ հրատարակչություն, ուստի վերջինիս կողմից կատարված փոխանցումը ևս Սահմանադրական օրենքի իմաստով համարվում է չթույլատրված նվիրատվություն:

Իսկ ինչ վերաբերում է «Բիզնես Զեթ-Փիար» գովազդային հրատարակչություն ՍՊԸ-ի կողմից Կուսակցությանը «նվիրատվություն» կատարելու մասին Հայկ Բաբուխանյանի դիտարկմանը, Հանձնաժողովը հարկ է համարում վկայակոչել «Բարեգործության մասին» օրենքի 3-րդ հոդվածի 2-րդ մասը, որի համաձայն՝ Բարեգործություն **չի համարվում** կուսակցություններին և առևտրային կազմակերպություններին (բացառությամբ առողջապահության բնագավառի կազմակերպությունների) դրամական և այլ նյութական միջոցների հատկացումը, ուստի Կուսակցությանը փոխանցված գումարը չի կարող համարվել բարեգործություն: Ընդ որում, նշվածի կապակցությամբ Հանձնաժողովը փաստում է, որ նույնիսկ եթե դա բարեգործություն համարվեր, ապա այն նույնպես Սահմանադրական օրենքի իմաստով չէր համարվի թույլատրելի:

Անդրադառնալով Կուսակցությանը կատարված անանուն փոխանցմանը՝ Հանձնաժողովն արձանագրում է, որ Սահմանադրական օրենքի 24-րդ հոդվածի 7-րդ մասով նախատեսված տեղեկատվության բացակայության պայմաններում հնարավոր չէ նույնականացնել Կուսակցությանը փոխանցում կատարած անձին, ինչով պայմանավորված՝ հնարավոր չէ ապահովել ՀՀ Սահմանադրությամբ և Սահմանադրական օրենքով ամրագրված՝ կուսակցության ֆինանսական միջոցների աղբյուրների հրապարակման պահանջը, ինչպես նաև տարեկան հաշվետվության ստուգման շրջանակում դրա թույլատրելի լինելու հանգամանքի պարզումը:

Տվյալ դեպքում Հայկ Բաբուխանյանի հայտնած տվյալներում թեև առկա են նվիրատվություն կատարած անձի անվան և ազգանվան մասին տվյալները, սակայն Կուսակցության բանկային հաշվի քաղվածքում բացակայում է Սահմանադրական օրենքի՝ մինչև 2025 թվականի ապրիլի 1-ը գործած խմբագրությամբ 24-րդ հոդվածի 7-րդ մասով նախատեսված՝ նվիրատվություն կատարած անձի՝ անձը հաստատող փաստաթղթերի համարի վերաբերյալ տվյալը, հետևաբար՝ Կուսակցությանը կատարվել է չթույլատրված՝ անանուն անձի կողմից կատարված նվիրատվություն:

Այսպիսով Հանձնաժողովը փաստում է, որ Կուսակցությունը 2023 և 2024 թվականների ընթացքում ստացել է ընդհանուր՝ 1,053,500 (մեկ միլիոն հիսուներեք հազար հինգ հարյուր) ՀՀ դրամի չափով չթույլատրված նվիրատվություն:

Նման պայմաններում՝ առաջնորդվելով Սահմանադրական օրենքի 24-րդ հոդվածի 6-րդ մասի իրավակարգավորումներով՝ Կուսակցությունը պարտավոր էր երկու շաբաթվա ընթացքում դրանք փոխանցել պետական բյուջե, ինչը չի կատարվել:

Նշվածով պայմանավորված չի ապահովվել նաև օրենսդրի նախանշված՝ Կուսակցության կողմից կոռուպցիոն ռիսկերից զերծ գործունեության վերահսկողության նպատակը, քանի որ Կուսակցության օգտին նվիրատվություններ կատարած անձանց վերաբերյալ տվյալները չներկայացնելու պայմաններում չի ապահովվում Կուսակցության ֆինանսական գործունեության նկատմամբ վերահսկողության իրականացումը:

Օրենսգրքի 14-րդ հոդվածի համաձայն՝ պաշտոնատար անձինք ենթակա են վարչական պատասխանատվության այնպիսի վարչական իրավախախտումների համար, որոնք կապված են կառավարման կարգի, պետական ու հասարակական կարգի, բնության, բնակչության առողջության պահպանության ոլորտում սահմանված կանոնները և մյուս այն կանոնները չպահպանելու հետ, որոնց կատարման ապահովումը մտնում է նրանց պաշտոնեական պարտականությունների մեջ: Սույն օրենսգրքի իմաստով՝ կուսակցության պաշտոնատար անձ է համարվում կուսակցության կանոնադրության կամ այլ փաստաթղթերի հիմքով՝ սույն օրենսգրքով պատասխանատվություն առաջացնող գործողությունների (անգործության) համար պատասխանատու կուսակցության ղեկավար մարմնի անդամը կամ կուսակցության՝ կազմակերպական-տնօրինչական, վարչատնտեսական գործառույթներ իրականացնող պատասխանատու անդամը կամ աշխատողը:

Արդարադատության նախարարության իրավաբանական անձանց պետական ռեգիստրի գործակալության էլեկտրոնային շտեմարանի տվյալների համաձայն՝ Հայկ Բաբուխանյանը 2008 թվականի մարտի 28-ից հանդիսանում է Կուսակցության գործադիր մարմնի ղեկավարը՝ նախագահը, ինչով պայմանավորված՝ հանդիսանում է նաև Սահմանադրական օրենքի 24-րդ հոդվածի 6-րդ մասի դրույթներով՝ Կուսակցության օգտին կատարված չթույլատրված նվիրատվությունների ստացման դեպքում կատարված նվիրատվությունը ստանալուց հետո՝ երկու շաբաթվա ընթացքում, դրանք պետական բյուջե փոխանցելու պարտականություն կրող պաշտոնատար անձ:

Հաշվի առնելով վերոնշյալը՝ Հայկ Բաբուխանյանը՝ որպես Օրենսգրքի 14-րդ հոդվածով նախատեսված կուսակցության պաշտոնատար անձ, ենթակա է պատասխանատվության Օրենսգրքի 189.16-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված արարքի համար:

Հիմք ընդունելով ամբողջ վերոշարադրյալը և ղեկավարվելով Օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 9-րդ կետով, Սահմանադրական օրենքի 24-րդ հոդվածի 4-րդ մասի 2-րդ և 5-րդ կետերով, 24-րդ հոդվածի 6-րդ մասով, Օրենսգրքի 189.16-րդ հոդվածի 1-ին մասով՝ Հանձնաժողովը.

Ո Ր Ո Շ Ե Ց

1. «Սահմանադրական իրավունք միություն» կուսակցության նախագահ Հայկ Բորիսի Բաբուխանյանի նկատմամբ կիրառել վարչական տույժ սահմանված նվազագույն աշխատավարձի հարյուրապատիկի՝ ***100,000 (հարյուր հազար) ՀՀ դրամի չափով:***

2. Տուգանքը պետք է վճարվի գանձապետական ***900005001335*** «Իրավախախտումների համար կիրառվող վարչական տուգանքներ և պատժամիջոցներ» ***հաշվեհամարին***՝ վճարման անդորրագրի **«նպատակ» դաշտում պարտադիր նշելով սույն որոշման համարը**:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Հայկ Բաբուխանյանին այն սահմանված կարգով հանձնելուն (հանձնված համարվելու) հաջորդող օրվանից:

4. Սույն որոշումն ուժի մեջ մտնելուց հետո Հայկ Բաբուխանյանին տրամադրել երեսնօրյա ժամկետ 1,053,500 (մեկ միլիոն հիսուներեք հազար հինգ հարյուր) ՀՀ դրամի չափով չթույլատրված նվիրատվությունների գումարը պետական բյուջե փոխանցելու համար:

5. Սույն որոշումը կարող է բողոքարկվել ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով և ժամկետում:

ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀԻ
ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՏԱՐՈՂ՝ ՄԱՐԻԱՄ ԳԱԼՍՏՅԱՆ